

ՔԱՂՎԱԾՔ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2013Թ-Ի ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Քննարկումը տեղի է ունեցել գյուղապետարանի դահլիճում, որ սկսվել է 2014 թվականի հունվարի 20-ին ժամը 14⁰⁰-ին:

Քննարկմանը մասնակցել են Արմավիրի մարզպետարանից փոխմարզպետ՝ Մովսես Քարոյանը, համայնքի միջնակարգ դպրոցի տնօրենը, բուժ ամբուլատորիայի տնօրենը և աշխատակիցները, ավագանու անդամները, մանկապարտեզի տնօրենը, համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատողները և համայնքի բնակիչներ:

2013 թվականի ընթացքում համայնքում կատարվել են ներքոնշյալ աշխատանքները՝

1. Անցկացվել է Համայնքի ավագանու 10 նիստ, որոնց ժամանակ քննարկվել են համայնքում կարևոր լուծում պահանջող հարցեր, իսկ ավագանու որոշումները փակցված են համայնքում՝ գյուղապետարանի շենքում՝ բնակիչների համար տեսանելի տեղում:
2. Համայնքի ղեկավարի կողմից ընդունվել են 76 որոշումներ, արձակվել են 15 կարգադրություններ, տրվել են 1055 տեղեկանքներ, ուղարկվել է 195 ելից գրություններ, տրվել են քաղվածքներ, համայնքի բնակիչների վերաբերյալ տրվել են մի շարք բնութագրեր, կազմվել է 4 կտակ:
3. Տեառընդառաջի կապակցությամբ համայնքի 13 նորապսակ ընտանիքների շնորհավորելու համար յուրաքանչյուր ընտանիքի հատկացվել է 20000 – ական դրամ:
4. Համայնքում ուսումնասիրվել է 2013թ-ի մայիսի 12-ին տեղացած կարկուտից տուժած բնակիչների վնասված ցանքատարածությունները և հաշվառվել 35հա 50%-ով վնասված ցանքատարածություններ: Արմավիրի մարզպետարանից որպես աջակցություն տրամադրված սերմերը, դիզելային վառելիքը տրվել է տուժած բնակիչներին:
5. Համայնքի կողմից աշխատանքներ են տարվել Բանկերի և վարկային կազմակերպությունների հետ՝ խնդրելով հնարավորինս աջակցել տուժած վարկառու բնակիչներին՝ վարկերի մարման գործընթացում որոշակի արտոնություններ կիրառելով նրանց նկատմամբ:
6. Համայնքի տարածքում պատշաճ մակարդակով կազմակերպվել է գարնանային գորակոչը:
7. Կազմակերպվել է միջոցառումներ՝ նվիրված կանանց տոնին ու մայրության օրվան, Հայրենական մեծ պատերազմի և Արցախի ազատագրման տարելիցներին, Հանրապետության օրվան՝ մայիսի 28-ին և Ամանորի կապակցությամբ:

8. Համայնքի բնակիչ 3 զորակոչիկների էջմիածնի ավտոդպրոցում սովորելու համար՝ անվճար երթևեկություն ապահովելու նպատակով, յուրաքանչյուրին հատկացվել է 20.000-ական դրամ:
9. Կազմակերպվել և իրականացվել է ներհամայնքային առուների մաքրման աշխատանքներ, այդ թվում նաև՝ կիսախողովակների:
10. Կատարվել է դաշտամիջյան ճանապարհների հողալցման և հարթեցման աշխատանքներ՝ նախապատրաստվելով բերքահավաքին, իսկ բերքահավաքն անցկացվել է առանց խոչընդոտների:
11. Համայնքի տարածքում կազմակերպվել է շաբաթօրյակ և մաքրվել են կենտրոնական փողոցը և գյուղամիջյան հատվածը:
12. Համայնքում նորմալ սանիտարական վիճակի ապահովման համար շաբաթական երկու անգամ աղբահավաք տրանսպորտային միջոցով կատարվում է աղբահավաքման աշխատանքներ:
13. Խճապատվել են համայնքի մի շարք փողոցներ:
14. Համայնքի բյուջեի միջոցներով ամբողջությամբ վերանորոգվել է համայնքի Մշակույթի տան առաջին հարկը, կառուցվել է նոր սանհանգույցներ, իսկ երկրորդ հարկում մասնակի տեղադրվել են պատուհաններ:
15. Համայնքի բնակիչների հանգիստն կազմակերպելու համար կառուցված զբոսայգում կատարվել են լուսավորման աշխատանքներ՝ տեղադրվել են էլեկտրական սյուներ և լուսակիրներ:
16. Համայնքի տարածքում ազգաբնակչության աճը խթանելու նպատակով խրախուսվել են համայնքի երիտասարդ ընտանիքները և շուրջ 20 ընտանիք ստացել է 50000-ական դրամ գումար:
17. Համայնքի բյուջեի միջոցներով հուլիս –նոյեմբեր ամիսներին իր աշխատանքներն է սկսել և ավարտել Համայնքի «Գառնիկ Կարապետյանի անվան մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը, որտեղ հաճախել են համայնքի շուրջ 53 երեխաներ:
18. Համայնքի միջնակարգ դպրոցի և մանկապարտեզի սաներին Երևան տեղափոխելու և ետ քերելու համար համայնքի բյուջեի միջոցներով տրամադրվել ավտոբուսներ:
19. Սեպտեմբեր – դեկտեմբեր ամիսներին իր աշխատանքներն է կազմակերպել համայնքի գրադարանը:
20. Համայնքի բնակիչների հուղարկավորության ժամանակ որպես հարգանքի տուրք գյուղապետարանի կողմից առաքվել են ծաղկեպսակներ:
21. Համայնքի վարչական բյուջեի միջոցներից հատկացվել է սոցիալական օգնություն՝ համայնքի անապահով բնակիչներին, Հայրենական մեծ պատերազմի վետերաններին, Արցախյան ազատամարտի մասնակիցներին, Արցախյան ազատամարտում զոհվածների ընտանիքներին:

22. Ժամանակին վճարվել է Գյուղապետարանի և Մանկապարտեզի աշխատողների աշխատավարձը և սոց. վճարները:

23. Այս ժամանակահատվածում կազմակերպվել է քաղաքացիների ընդունելություններ, պատասխանվել է նրանց բոլոր հարցերին, դիմումներին և տրամադրվել է պահանջվող փաստաթղթերը:


Տարվա կտրվածքով բյուջեի եկամուտները հավաքագրվել և ծախսերը կատարվել են հետևյալ համամասնություններով՝ հարկային եկամուտները՝ հողի հարկ պլան 13500.7հ/դ , փաստացի 13666.5 հ/դ, կատարողական 101.2%, գույքահարկ պլան 2149.9 հ/դ, փաստացի 3998.1 հ/դ, կատարողական 186 %, տեղական տուրքեր պլան 281 հ/դ, փաստացի 302.7հ/դ, կատարողական 107.7%, այլ ոչ հարկային եկամուտներ պլան 210.0 հ/դ, փաստացի 741.4 հ/դ, կատարողակ 353.0 դոտացիա պլան 34715.8 հ/դ, փաստացի 34715.8 հ/դ, կատարողական 100%, հողի օտարումից սպասվելիք գումար պլան -4000,0հ/դ, փաստացի 0հ/դ կատարողական 0 %, տարեսկզբի ազատ մնացորդ 7655.8 հ/դ , սուբվենցիա պլան 585.6 հ/դ, փաստացի 538.6 հ/դ, կատարողական 92.2% վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներ 4144.2 հ/դ , փաստացի 4144.2, կատարողական 100% ընդամենը եկամուտներ՝ պլան 59098.8 հ/դ, փաստացի 61618.9 հ/դ, կատարողական 104.3%: Ծախսեր՝ Տեղական ինքնակառավարում պլան 25142.5 հ/դ, փաստացի 22350.7 հ/դ, կատարողական 88.9 %, սոց. օգնություն պլան 7500.0 հ/դ, փաստացի 7500.0 հ/դ, կատարողական 100%, մշակույթ, սպորտ և կրոն պլան 1500,0 հ/դ, փաստացի 800,0 հ/դ, կատարողական 53.3%, սան մաքրում պլան 2000,0հ/դ, փաստացի 2000.0հ/դ, կատարողական 100%, կրթություն և գիտություն պլան 5156.3 հ/դ, փաստացի 4900.0հ/դ, կատարողական 95 %, ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ պլան 6000.0հ/դ, փաստացի 4165.0հ/դ , կատարողական 69.4% , ֆոնդային բյուջե 11800.0հ/դ, փաստացի 11800.0 հ/դ, կատարողական 100 %, պահուստային ֆոնդ 0: Ընդամենը ծախսեր պլան 59098.9 հ/դ, փաստացի 53515.7 հ/դ, կատարողական 90.5 %, :

Տեղի ունեցավ քննարկում, որի ժամանակ բարձրացվեցին հետևյալ հիմնախնդիրները՝

Համայնքում առկա խնդիրներն են

1. Հիմնովին վերանորոգման կարիք ունի Մշակույթի տան երկրորդ և երրորդ հարկերն ու տանիքը:
2. Անմխիթար վիճակում է գտնվում խմելու ջրի ցանցը՝ ջրատար խողովակները ամբողջությամբ վնասված են:

3. Անհրաժեշտ է ապահարհն հասցնել գյուղի մնացած փողոցների խճապատումը:
4. Պետք է շարունակվի ու ապահարհն հասցվի դպրոցի մերքին հարդարման աշխատանքները:
5. Հիմնովին վերանորոգման կարիք ունի գյուղի Ծանրամարտի մարզարպրոցը:
6. Կարևոր նշանակություն ունի համայնքի Ըուծ ամբուլատորիայի համար շտապ օգնության մեքենայի առկայությունը, քանի որ այն սպասարկում է 4 համայնք:
7. Անմեխիթար վիճակում է գտնվում համայնքը սնուցող էլեկտրական ցանցը, անջատումներն տեղի են ունենում շատ հաճախակի՝ կապված լարերի անպիտանության հետ:

Ձեղակերտ համայնքի ղեկավար  Ա. Առաքելյան

20.01.2014թ